«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
գործադիր տնօրեն Ա. Գևորգյան

«26» հունիս 2024թ.

ՀՀ տղամարդկանց առաջնության
կիսաեզրափակիչ մրցաշարի

Կանոնադրություն

Անցկացման վայրը՝ ք. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա (Շնչենկո 34)
Ժամկետները՝ սեպտեմբերի 12-19-ը

Մասնակիցները՝ ա. բարձրագույն և առաջին խմբի մրցաշարերում մասնակցության իրավունք չունեցող միջազգային գրոսմայստերներն ու վարպետները, ՖԻԴԵ-ի և ազգային վարպետները, կին գրոսմայստերներն ու միջազգային վարպետները,

բ. 2301 և բարձր ՖԻԴԵ-ի կամ ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,

գ. Հայաստանի մինչև 18 տարեկան պատանիների առաջնությունում 2-5-րդ տեղեր գրաված շախմատիստները,

դ. Հայաստանի մինչև 16 տարեկան պատանիների առաջնությունում 1-5-րդ տեղեր գրաված շախմատիստները,

ե. Հայաստանի մինչև 14 տարեկան պատանիների առաջնությունում 1-3-րդ տեղեր գրաված շախմատիստները,

զ. Հայաստանի մինչև 12 տարեկան պատանիների առաջնությունում 1-ին տեղ գրաված շախմատիստը,
է. Հայաստանի մինչև 18 և 16 տարեկան աղջիկների առաջնությունում 1-ին տեղեր գրաված շախմատիստուհիները,
Երևանից առաջնությունում մասնակցության իրավունք ունեն 2100 և բարձր ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստները:

Հայաստանի տղամարդկանց առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին մասնակցության իրավունք ունեն. 5-ական շախմատիստ Շիրակի, Կոտայքի, 4-ական՝ Լոռու, Սյունքի և Արմավիրի, 3-ական՝ Արարատի, 2-ական Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Տավուշի մարզերից: Հայաստանի շախմատի ֆեդերացիան սեփական հայեցողությամբ կարող է արտոնել լրացուցիչ երկու շախմատիստների մասնակցությունը:
Մրցակարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 տուր
Ժամակարգը՝ 90 րոպե յուրաքանչյուր մասնակցին մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:
Խաղի մեկնարկից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:

Լրացուցիչ ցուցանիշներ՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. Հատված Բուխհոլց -1 ցուցանիշի
2. Բուխհոլցի ցուցանիշի
3. Ըստ անձնական հանդիպման արդյունքի
4. Սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
5. Հաղթանակների առավելագույն քանակի

1-4-րդ տեղերը գրված շախմատիստները իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի տղամարդկանց 2025թ. առաջնության՝ առաջին խմբի մրցաշարին:

Մրցաշարի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է սեպտեմբերի 6-ը:
Բոլոր մասնակիցները պետք ունենան ՖԻԴԵ-ի նույնականացման համար (FIDE ID)

Մրցաշարի ընթացքում մարզերը (30կմ. և ավել) ներկայացնող մարզիկները կապահովվեն սնունդով և գիշերավարձով:
Նրանց ճանապարհածախսը, ինչպես նաև ուղեկցող մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Խաղացանկ

12.09.2024	1-ին խաղափուլ	15:00
13.09.2024	2-րդ խաղափուլ	15:00
14.09.2024	3-րդ խաղափուլ	15:00
15.09.2024	4-րդ խաղափուլ	11:00
15.09.2024	5-րդ խաղափուլ	16:00
16.09.2024	6-րդ խաղափուլ	15:00
17.09.2024	7-րդ խաղափուլ	15:00
18.09.2024	8-րդ խաղափուլ	15:00
19.09.2024	9-րդ խաղափուլ	11:00

Երևանը ներկայացնող շախմատիստները գրանցման համար անցնեն հետևյալ հղումով.

https://forms.gle/kXwaTmJyjWBj1GaS8

Մարզերի հայտերն ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ info@chessfed.am

Հարցերի դեպքում զանգահարել՝ 099 440105

«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի
գործադիր տնօրեն՝ Ա. Գևորգյան
« 26 » հոկտեմբեր 2024թ.

Հայաստանի կանանց 2025թ. առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անցկացման վայրը՝ ք. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա (Շևչենկո 34)
Ժամկետները՝ սեպտեմբերի 12-19-ը
Մասնակիցները՝ Մասնակցության իրավունք ունեն երկրորդ, առաջին կարգային և մինչև 2001 ազգային վարկանիշը չգերազանցող շախմատիստուհիները:
Մրցակարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 տուր
Ժամակարգը՝ 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

1-10-րդ տեղեր գրաված շախմատիստուհիները իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի 2025թ. կանանց առաջնության՝ առաջին խմբի մրցաշարին:

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե՝ խաղափուլը սկսելու պահից:

Լրացուցիչ ցուցանիշներ՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ.

1. հատված Բուխհոլց-1 ցուցանիշի,
2. Բուխհոլցի,
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն թվի:

Խաղացանկ

12.09.2024	1-ին խաղափուլ	15:00
13.09.2024	2-րդ խաղափուլ	15:00
14.09.2024	3-րդ խաղափուլ	15:00
15.09.2024	4-րդ խաղափուլ	11:00
15.09.2024	5-րդ խաղափուլ	16:00
16.09.2024	6-րդ խաղափուլ	15:00
17.09.2024	7-րդ խաղափուլ	15:00
18.09.2024	8-րդ խաղափուլ	15:00
19.09.2024	9-րդ խաղափուլ	11:00

Գրանցման համար անցնել հետևյալ հղումով.

https://forms.gle/txDpcReQjXcQ3jdW9

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 091 70 28 85: